

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԵՐՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԻՆԳԵՐՈՐԴ ՆԻՍՏԻ

Ք. Երևան

18 հունիսի 2010թ.

Ժ.11:00

Մասնակցում էին՝ Երևանի ավագանու 46 անդամներ:

Նիստը վարում էր Երևանի քաղաքապետ Գ. Բեգլարյանը:

Երևանի ավագանու նիստին հրավիրված էին՝ Երևանի քաղաքապետի տեղակալները, Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարը, քաղաքապետարանի աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարները և վարչական շրջանների ղեկավարները:

Նիստին ներկա էին ՀՀ ՁԼՄ-ների ներկայացուցիչներ:

ՕՐԱԿԱՐԳ

1. Օրակարգի նախագծի հաստատում:
2. Երևան քաղաքի ավագանու կանոնակարգը նոր խմբագրությամբ ընդունելու մասին:
3. Երևանի Բյուզանդի փողոց թիվ 33/2 հասցեի էլեկտրաէնթալթայանը և կաթսայատունն անհատույց օգտագործման հանձնելու մասին:
4. Երևան համայնքի սեփականություն համարվող 50 տոկոսից ավելի բաժնեմաս ունեցող կազմակերպությունների կողմից 2009 թվականի տարեկան գործունեության արդյունքներով առաջացած գուտ շահույթի բաշխման ուղղությունները և Երևանի բյուջե վճարման ենթակա շահութաբաժինների չափերը հաստատելու մասին:
5. Գումար հատկացնելու մասին:
6. Երևանի վարչական շրջանի ղեկավարի և նրա աշխատակազմի գործունեության կարգը սահմանելու մասին:
7. Մի շարք համայնքային առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունների անվանափոխության մասին:
8. Երևան քաղաքի խորհրդանիշների պարտադիր օգտագործման այլ դեպքերը և կարգը սահմանելու մասին:
9. Երևանի քաղաքապետի մի շարք որոշումներին համաձայնություն տալու մասին:
10. «Արմենիա Ջեռտիոնե» փակ բաժնետիրական ընկերության վարձակալությանը գույք հանձնելու մասին:
11. Երևան քաղաքի սեփականություն համարվող գույքը օտարելու մասին:
12. Երևանի քաղաքապետի 2010 թվականի մայիսի 5-ի հ.1784-Ա և հունիսի 3-ի հ.2149-Ա որոշումները, «Երևանի սպորտ կոմիտե» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը, կառուցվածքը, աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը, պաշտոնային դրույքաչափերը և «Երևանի սպորտ կոմիտե» համայնքային ոչ առևտրային կազմակերպության թվով 25 հիմնարկների օրինակելի կանոնադրությունը, աշխատակիցների թվաքանակները, հաստիքացուցակները, պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին:

Երևանի քաղաքապետ Գ. Բեգլարյանը, մինչև օրակարգի հարցերին անցնելը, առաջարկեց, հաշվի առնելով Երևանի ավագանու իրավական հարցերի մշտական հանձնաժողովի 17.06.2010թ. գրավոր եզրակացությունը, օրակարգի 2-րդ հարցի քննարկումը հետաձգել մինչև 2010 թվականի սեպտեմբերի 14-ը:

1.ԼՍԵՑԻՆ – Օրակարգի հաստատման մասին:

ՈՐՈՇՎԵՑ – Հաստատել Երևանի ավագանու երրորդ նստաշրջանի 18.06.2010թ. նիստի օրակարգը:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ – կողմ – 46
դեմ – 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց միաձայն

2.ԼՍԵՑԻՆ – Երևանի Բուզանդի փողոց թիվ 33/2 հասցեի էլեկտրաէներթակայանը և կաթսայատունն անհատույց օգտագործման հանձնելու մասին

ՈՐՈՇՎԵՑ – 1. Թույլատրել Երևանի քաղաքապետին.

1) Երևան համայնքի սեփականությունը համարվող Բուզանդի փողոց, թիվ 33/2 հասցեում գտնվող՝ 02.03.2010թ. տրված անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման թիվ 2277777 վկայականում նշված 225.2 քմ մակերեսով նկուղը և 1-ին հարկի 100.6 քմ մակերեսով թիվ 1 սենյակը (կաթսայատան համար նախատեսված մասը) անժամկետ անհատույց օգտագործման իրավունքով հանձնել <<Գրիար>> փակ բաժնետիրական ընկերությանը՝ այն ըստ նպատակային նշանակության օգտագործելու համար:

2) Երևան համայնքի սեփականությունը համարվող Բուզանդի փողոց, թիվ 33/2 հասցեում գտնվող՝ 02.03.2010թ. տրված անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման թիվ 2277777 վկայականում նշված 1-ին հարկի 46.5 քմ մակերեսով թիվ 2, 27.7քմ մակերեսով թիվ 3, 8.7քմ մակերեսով թիվ 4, 6.6 քմ մակերեսով թիվ 5, 8.5 քմ մակերեսով թիվ 6 և 8.5 քմ մակերեսով թիվ 7 սենյակները՝ (էլեկտրաէներթակայանի համար նախատեսված մասը) անժամկետ անհատույց օգտագործման իրավունքով հանձնել <<Հայաստանի էլեկտրացանցեր>> փակ բաժնետիրական ընկերությանը՝ այն ըստ նպատակային նշանակության օգտագործելու համար:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ – կողմ – 46
դեմ – 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց միաձայն

3. ԼՍԵՑԻՆ – Երևան համայնքի սեփականություն համարվող 50 տոկոսից ավելի բաժնեմաս ունեցող կազմակերպությունների կողմից 2009 թվականի տարեկան գործունեության արդյունքներով առաջացած զուտ շահույթի բաշխման ուղղությունները և Երևանի բյուջե վճարման ենթակա շահութաբաժինների չափերը հաստատելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Հաստատել Երևան համայնքի սեփականություն համարվող 50 տոկոսից ավելի բաժնեմաս ունեցող կազմակերպությունների 2009 թվականի տարեկան գործունեության արդյունքներով առաջացած զուտ շահույթի բաշխման ուղղությունները և Երևանի բյուջե վճարման ենթակա շահութաբաժինների չափերը համաձայն հավելվածի:

2. Սահմանել, որ սույն որոշման հավելվածում նշված կազմակերպությունների կողմից շահութաբաժինների վճարումներն Երևանի բյուջե կատարվում են եռամսյա ժամկետում (ամսական հավասար չափերով), բայց ոչ ուշ, քան մինչև հոկտեմբերի 1-ը:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ – կողմ – 46
դեմ – 0
ձեռնպահ – 0

4. ԼՍԵՑԻՆ – Գումար հատկացնելու մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑ - Երևանի ավագանու «Բարգավաճ Հայաստան» խմբակցության անդամ Պողոս Փլավյանը:

ՈՐՈՇՎԵՑ – Երևան քաղաքի 2010 թվականի բյուջեի ֆոնդային մասի պահուստային ֆոնդից 2010 թվականի երկրորդ եռամսյակում հատկացնել 200,000.0 հազ. դրամ՝ Երևան քաղաքի վարչական շրջաններում ոռոգման ցանցի կառուցման նպատակով՝ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Շենքերի և շինությունների կառուցում» հոդվածով:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ – կողմ – 46
դեմ – 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց միաձայն

5.ԼՍԵՑԻՆ – Երևանի վարչական շրջանի ղեկավարի և նրա աշխատակազմի գործունեության կարգը սահմանելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Սահմանել Երևան քաղաքի վարչական շրջանի ղեկավարի և նրա աշխատակազմի գործունեության կարգը՝ համաձայն հավելվածի:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ – կողմ – 46
դեմ – 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց միաձայն

6. ԼՍԵՑԻՆ – Մի շարք համայնքային առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունների անվանափոխության մասին:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Անվանափոխել Երևանի մի շարք համայնքային առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունները՝ համաձայն հավելվածի:

2. Առաջարկել Երևանի քաղաքապետին՝ սահմանված կարգին համապատասխան իրականացնել սույն որոշման հավելվածում նշված կազմակերպությունների ֆիրմային անվանման պետական գրանցման հետ կապված անհրաժեշտ գործառույթներ և ձևակերպումներ:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ – կողմ – 46
դեմ – 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց միաձայն

7. ԼՍԵՑԻՆ– Երևան քաղաքի խորհրդանիշների պարտադիր օգտագործման այլ դեպքերը և կարգը սահմանելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ –1.Սահմանել Երևանի խորհրդանիշների պարտադիր օգտագործման այլ դեպքերը և կարգը՝ համաձայն N 1, N 2, և N 3 հավելվածների:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ – կողմ – 46
դեմ – 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց միաձայն

8. ԼՍԵՑԻՆ – Երևանի քաղաքապետի մի շարք որոշումներին համաձայնություն տալու մասին:
ՈՐՈՇՎԵՑ – Համաձայնություն տալ Երևանի քաղաքապետի 2010 թվականի մայիսի 11-ի ««Կենտրոն-Մաքրություն» փակ բաժնետիրական ընկերության նոր խմբագրությամբ կանոնադրությունը, կառուցվածքը, աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» հ.1832-Ա, մայիսի 14-ի ««Մաքուր Աջափնյակ» փակ բաժնետիրական ընկերության նոր խմբագրությամբ կանոնադրությունը, կառուցվածքը, աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» հ.1890-Ա, մայիսի 26-ի ««Աջափնյակ-վերելակ» փակ բաժնետիրական ընկերության նոր խմբագրությամբ կանոնադրությունը, աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» հ.2064-Ա, ««Ք.Երևանի Դավթաշեն համայնքի բնակֆոնդի և կոմունալ տնտեսության» փակ բաժնետիրական ընկերության աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» հ.2066-Ա, մայիսի 27-ի «Երևանի ենթակառուցվածքային մի շարք ոչ առևտրային կազմակերպությունների աշխատակիցների թվաքանակները, հաստիքացուցակները, պաշտոնային դրույքաչափերը և կառուցվածքը հաստատելու մասին» հ.2121-Ա, հունիսի 2-ի ««Հայ-Արտ» մշակութային կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության նոր խմբագրությամբ կանոնադրությունը, կառուցվածքը, աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» հ.2130-Ա, «Մալաթիա-Սեբաստիա թաղային համայնքի «Կռունկ» փակ բաժնետիրական ընկերության աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» հ.2131-Ա, ««Արաբկիր-Սերվիս» փակ բաժնետիրական ընկերության նոր խմբագրությամբ կանոնադրությունը, աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» հ.2132-Ա, հունիսի 3-ի «Երևանի Նորք-Մարաշ թաղային համայնքի «Կանաչ Բարձրունք», «Քանաքեռ-Զեյթուն համայնքի «Սան-մաքրում», «Նուբարաշեն թաղային համայնքի «Նուբարաշեն» փակ բաժնետիրական ընկերությունների և «Նոր Նորք համայնքի համատիրությունների աշխատանքները համակարգող» համայնքային ոչ առևտրային կազմակերպության աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» հ.2151-Ա, «Արաբկիր համայնքի «Նոր Արաբկիր» փակ բաժնետիրական ընկերության աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» հ.2152-Ա, «Մալաթիա-Սեբաստիա համայնքի «Վերելակ» փակ բաժնետիրական ընկերության աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» հ.2153-Ա որոշումներին:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ – կողմ – 46
դեմ – 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց միաձայն

9. ԼՍԵՑԻՆ – «Արմենիա Ջեոտիոնե» փակ բաժնետիրական ընկերության վարձակալությանը գույք հանձնելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Թույլատրել Երևանի քաղաքապետին Երևանի սեփականությունը համարվող Ազատության հրապարակում գտնվող ստորգետնյա ավտոկայանատեղին (այսուհետ՝ գույք) հանձնել «Արմենիա Ջեստիոնե» փակ բաժնետիրական ընկերության վարձակալությանը:

2. Առաջարկել Երևանի քաղաքապետին.

1) «Արմենիա Ջեստիոնե» ընկերության հետ կնքել գույքի վարձակալության պայմանագիր՝ դրանում նախատեսելով հետևյալ հիմնական պայմանները.

ա. գույքը հանձնվում է վարձակալության 20 տարի ժամկետով,

բ. գույքը հանձնվում է վարձակալության վարձակալված գույքն օգտագործելու արդյունքում ստացված զուտ շահույթի (հավաքարգված միջոցների և կատարված ծախսերի տարբերություն) 50% բաժինը, որպես վարձավճար, Երևան համայնքին վճարելու պայմանով,

գ. վարձակալը պարտավոր է ավտոկայանատեղի համար վճարի չափը (չափերը) նախապես համաձայնեցնել Երևանի քաղաքապետի հետ: Վճարի չափը (չափերը) կարող է փոփոխվել կողմերի համաձայնությամբ:

2) իրականացնել սույն որոշման 2-րդ կետի 1-ին ենթակետից բխող այլ գործառույթներ:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ – կողմ – 46

դեմ – 0

ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց միաձայն

10. ԼՍԵՑԻՆ – Երևան քաղաքի սեփականություն համարվող գույքը օտարելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ – Թույլատրել Երևանի քաղաքապետին՝ Երևան քաղաքի սեփականություն համարվող Երևանի Ա. Սարգսյան 8 հասցեում գտնվող՝ 2010 թվականի հունիսի 3-ի դրությամբ 4.300.000 ՀՀ դրամ գնահատված շուկայական արժեքով՝ 637,5 քառ. մետր մակերեսով՝ չորրորդ աստիճանի վնասվածությամբ շենքը և դրա սպասարկման ու օգտագործման համար անհրաժեշտ 0,047508 հա. հողատարածքն ուղղակի վաճառքի ձևով օտարել Հայաստանի Հանրապետության քաղաքացի Վրեժ Մարկոսյանին (անձնագիր՝ AK 0363378 տրված 25.08.2009թ. 001 կողմից):

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ – կողմ – 46

դեմ – 0

ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց միաձայն

11. ԼՍԵՑԻՆ– Երևանի քաղաքապետի 2010 թվականի մայիսի 5-ի հ.1784-Ա և հունիսի 3-ի հ.2149-Ա որոշումները, «Երևանի սպորտ կոմիտե» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը, կառուցվածքը, աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը, պաշտոնային դրույքաչափերը և «Երևանի սպորտ կոմիտե» համայնքային ոչ առևտրային կազմակերպության թվով 25 հիմնարկների օրինակելի կանոնադրությունը, աշխատակիցների թվաքանակները, հաստիքացուցակները, պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑ - «Բարգավաճ Հայաստան» խմբակցության քարտուղար Գուրգեն Գասպարյանը:

ՈՐՈՇՎԵՑ –1. Հաստատել՝

1) Երևանի քաղաքապետի 2010 թվականի մայիսի 5-ի «Երևանի թվով 25 համայնքային ոչ առևտրային կազմակերպություններ միաձուլման ձևով վերակազմակերպելու, «Երևանի Սպորտ Կոմիտե» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն ստեղծելու մասին» N 1784-Ա և 2010 թվականի հունիսի 3-ի «Երևանի թվով 25 համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների միձուլման պայմանագիրը և փոխանցման ակտերը հաստատելու, «Երևանի Սպորտ Կոմիտե» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը սեփականության իրավունքով հանձնվող և ամրացվող գույքի կազմն ու արժեքը հաստատելու և «Երևանի Սպորտ Կոմիտե» համայնքային ոչ առևտրային կազմակերպության թվով 25 հիմնարկներ ստեղծելու մասին» N 2149-Ա որոշումները.

2) «Երևանի Սպորտ Կոմիտե» համայնքային ոչ առևտրային կազմակերպության.

ա. կանոնադրությունը՝ համաձայն N1 հավելվածի,

բ. կառուցվածքը՝ համաձայն N2 հավելվածի,

գ. աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն N 3 հավելվածի:

3) Երևանի քաղաքապետի 2010 թվականի հունիսի 3-ի N 2149-Ս որոշման 5-րդ կետում նշված հիմնարկների.

ա. օրինակելի կանոնադրությունը՝ համաձայն N 4 հավելվածի,

բ. աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն N 5 հավելվածի:

2. Առաջարկել Երևանի քաղաքապետին՝ սահմանված կարգին համապատասխան իրականացնել Երևանի թվով 25 համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների միաձուլման ձևով վերակազմակերպման, «Երևանի Սպորտ Կոմիտե» համայնքային ոչ առևտրային կազմակերպության և Երևանի քաղաքապետի 2010 թվականի հունիսի 3-ի N 2149-Ս որոշման 6-րդ կետում նշված հիմնարկների ստեղծման հետ կապված անհրաժեշտ գործառույթներ և ձևակերպումներ:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ – կողմ – 32

դեմ – 14

ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց ձայների մեծամասնությամբ

ԸՆԴՄԻՋՈՒՄ

Նիստը վերսկսվեց ժամը 11:35-ին:

Երևանի ավագանու անդամների բանավոր հարցերին պատասխանեցին Երևանի քաղաքապետը, քաղաքապետի տեղակալները, քաղաքապետարանի աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարները և վարչական շրջանների ղեկավարները: /սղագրությունը կցվում է/:

Երևանի քաղաքապետ Գ. Բեգլարյանը տեղեկացրեց, որ Երևանի ավագանու չորրորդ նստաշրջանի առաջին նիստը կգումարվի 2010 թվականի սեպտեմբերի 14-ին, ժամը 11:00-ին:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Գ. ԲԵԳԼԱՐՅԱՆ